Մանթաշեանի որդիների անունով՝ նոցա հօր մահուան առթիւ։

—Ապրիլ 26, № 1492. առաջադրուեց գեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին գնալ Տփխիս և ներկայ լինել Տ. Տեղակալի և Մայր Աթոռի միաբանութեան կողմից մեծագործ հանգուցեալ Ալէքսանդր Մանթաշեանի թաղման։

—Ապրիլ 23, № 1493. առաջադրութիւն Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող գեր. Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով յիշեալ կարգադրութեան մասին տեղեկութիւն ստուեց նորան։

—Ապրիլ 28, № 1500. առաջադրութիւն Ղարաբաղի վիճակային Կոնսիստորիայի անունով. որով նոյն Կոնսիստորիայի անդամ կարգուեց Յակոբ քահանայ Այվազեանցն ս. Էջմիածնի Սինոդի օրագրական վճռով արձակուած Սամուէլ քահանայ Գասպարեանի փոխարէն։

—Ապրիլ 28, № 1501. առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող գեր. Տ. Եփրեմ եպիսկոպոսին խիստ ուշադրութիւն դարձնել և հսկել, որ ոչ ոք առանց ժամաշապկի չըպատարագէ և չերգէ Տփխիսի Հայոց եկեղեցիներում։

—Ապրիլ 29, № 1510. առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանին, նորա խնդրած նպաստի փոխարէն, ամսական 50 ռուբլի ռոճիկ և անդադրում ի մէկէն մայիսի մինչև տարեսոյս օգոստոսի վերջը, որպէս զի իւր խնդրի համաձայն գնայ ապաքինուելու։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Ապրիլի 1-ին թ. 249. Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցեալ մարտի 28-ի թ. 1427 առաջադրութիւնը Սիօն վարդապետին Մ. Աթոռի հիւրընկալ նշանակելու մասին, որոշեց. Ամենապատիւ Տ. Տեղակալի առաջադրութեան համաձայն Տ. Արիստակէս վարդապետին

ազատ համարել հիւրընկալի պաշտօնից և նրա տեղ կարգել հիւրընկալ Տ. Սիօն վարդապետին։

Ապրիլի 4-ին թ. 253. Սինոդը լսեց Ղարաբաղի Կոնսիստորիայի 1910 թ. Սեպտ. 29-ի թ. 3099 յայտարարութիւնը նախաւ գաւառի Նիժ գիւղացի Մարտիրոս Շիրուանեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային ընդունել Մարտիրոս Շիրուանեանին Հոգևոր կոչման մէջ և, թեմում եպիսկոպոս չլինելու պատճառով, յանձնարարել Մայր Աթոռի միաբան Տ. Աշոտ եպիսկոպոսին ձեռնադրել նրան քահանայ Թոսիկ և Ծիրիկ գիւղերի համար։

Ապրիլի 4-ին, թ. 255. Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. Նոյեմբերի 27-ի թ. 8268 յայտարարութիւնը աղէքսանդրապոլցի Անուշաւան Մատնիշեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային Անուշաւան Մատնիշեանին ընդունել հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Բրուտ-Սօգիւտլու գիւղի համար։

Ապրիլի 18-ին թ. 256. Սինոդը լսեց Տ. Արտակ վարդապետի յայտարարութիւնը, որով խնդրում է իրան ազատել Մ. Աթոռի գանձապահութեան պաշտօնից. որոշեց. ազատ համարել Տ. Արտակ վարդապետին յիշեալ պաշտօնից և կարգել նրա տեղ գանձապահ Տ. Մուշէ վարդապետին։

Ապրիլի 29-ին. թ. 284. Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. Նոյեմբերի 23-ի յայտարարութիւնը Աղէքսանդրապոլի գաւառի Ճլովխան գիւղի բնակիչ Մարտիրոս Թորոսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Հոգևոր կոչման մէջ Ճլովխան գիւղի բնակիչ Մարտիրոս Թորոսեանին և առաջադրել Երևանի Փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար։